Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

15.01.2025թ.-ին կնքված թիվ PDU-103-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան 08.**10.2025թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և Արդարադատության նախարարությունը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Հովսեփյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 15.01.2025թ.-ին կնքված թիվ PDU-103-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 14 000 000 (տասնչորս միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 15.01.2025թ.-ին կնքված թիվ PDU-103-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝	**Պատվիրատու՝**
«Հայփոստ» ՓԲԸ	ՀՀ արդարադատության նախարարություն
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5	ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՎՀՀ՝ 02507464	ՀՎՀՀ՝ 02506264
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 1930003703156000	Հ/Հ՝ 900011018547
Հեռ.՝ (010) 514-548	Հեռ.՝ (010) 594-091

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և
փոստային պրոդուկտների վարչության
ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան----------
/ստորագրություն/

Գլխավոր քարտուղար՝

Էդգար Հովսեփյան----------
/ստորագրություն/